«ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/1/1

ք. Երևան «25» ապրիլի 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ը, ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ֆլեշ Մոտորս»** ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն **Ա.Լալայանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Ավտոմեքենաների վերանորոգման» ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև **450,000 (չորս հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]՝ համաձայն Հավելված N 1.1-ով ներկայացված սակագների:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 և կցվող N 1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 00873228
ՀՀ՝ 900000900283	ՀՀ՝ 1510012745550100
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Աշոտ Կիրակոսյան	Ա.Լալայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«25» ապրիլի 2019 թ. կնքված
«ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/1/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111130/5	Տես կցվող հավելված 1□1	դրամ	450,000	1	ՀՀ ք.Երևան, Ուլնեցի 31	Պայմանագրի կնքման պահից մինչև 2019թ. դեկտեմբերի 16-ը

Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն հինգ ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն երեք ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ առնվազն մեկից-հինգ օրացուցային օրվա ընթացքում/կախված ավտոմեքենայի անսարքությունից/, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Տեխսպասարկման կայանում տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի արտահերթ:
Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա նվազագույնը 7 բոքսեր ավտոմեքենաների վրա միաժամանակ աշխատելու հնարավորություն: Կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ունենա էլեկտրոնային և էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն, կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն՝ ախտորոշում կատարելու համար, դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում նաև ալյումինի և չուգունի, ներկման, չորացման և հարդարման ժամանակակից միջոցներ, կատարվող աշխատանքների վրա ինժեներական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն:
Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա վերոնշյալ նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխսպասարկում կատարելու բոլոր միջոցները:
Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություն այլ երկրների արտադրության ավտոմոբիլների, որից
Toyota LC-Prado-4.0
Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է ՏՍՎՆ 1 ներառվող ծառայությունների անվանում / տե խ. զննում ըստ հավելված Ա-ի /
ՏՍՎՆ 2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի – այլ օժանդակ նյութերի անվանումները/ ըստ հավելված Բ-ի

- Օգտագործվող պահեստամասերը պերք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:
- **Մասնակիցը պետք է հավաստի,որ**

Ունի ավտոտեխնիկական սպասարկման կայան Երեւանում, որը կահավորված է ավտովերանորոգման համապատասխան սարքավորումներով /ամբարձիչներ, վուլկանացնող և կարգավորող սարքեր, ախտորոշիչ սարքեր և այլն/
Վերանորոգման ներկայացված ավտոմեքենան դիագնոստիկ զննման պետք է ենթարկվի ներկայացված օրը և մեկօրյա ժամկետում
Պատվիրատուին հայտնի տեղեկատվություն վերանորոգման վերաբերյալ:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 00873228
ՀՀ՝ 900000900283	ՀՀ՝ 1510012745550100
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Աշոտ Կիրակոսյան	Ա.Լալայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1.1
«25» ապրիլի 2019 թ. կնքված
«ՊՇԳՀ-ՇՀԲ-2019/1/1» ծածկագրով պայմանագրի

SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		Միավորի համար առաջարկվող գինը՝ ներառյալ բոլոր հարկերը
1	2	3
Հավելված Ա		
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		Այլ պետությունների արտադրության մեքենաներ
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
8	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
9	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
12	ABS համակարգի ստուգում	0
13	էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
14	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
15	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		Այլ պետությունների արտադրության մեքենաներ
1. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
16	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1000
17	Յուղի պոմպի փոխարինում	100
18	Ղեկավարման բլոկի վերանորոգում	100
19	Բռնկման կարգավորում	100
20	CO կարգավորում	100
21	Օդի զտիչի փոխարինում	1500
22	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	1500
23	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	5000
24	Բենզամղիչի փոխարինում	8000
25	Վառելիքի զտիչի փոխարինում	8000
26	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	100
27	Սրահի զտիչի փոխարինում	2000
2. Սառեցման և արտածման համակարգ		
28	Հովհարի փոկի հանում և տեղադրում	2000
29	Հովհարի հանում և տեղադրում	2000

30	Ռադիատորի հանում և տեղադրում	12000
31	Ռադիատորի վերանորոգում	5000
32	Թերմոստատի փոխարինում	8000
33	Ջրի պոմպի փոխարինում	15000
34	Ջրի պոմպի վերանորոգում	0
35	Ընդարձակող բաքի փոխարինում	100
36	Խլարարի հանում և տեղադրում	1000
37	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1000
	3. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
38	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	20000
	4. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
39	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	5000
40	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգում	5000
41	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	5000
42	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	5000
	4. Կախոց	
43	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0
44	Տրավերսի հանում և տեղադրում	10000
45	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	10000
46	Անվակունդի առանցքակալի փոխարինում	5000
47	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000
48	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	100
49	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	100
50	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2000
51	Ձսպանակի հանում և տեղադրում	0
52	Ձսպակի հանում և տեղադրում	0
53	Ձսպակի վռանների փոխարինում	0
54	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7000
55	Ներքևի լծակի հանում և տեղադրում	5000
56	Ներքևի լծակի վռանների փոխարինում	5000
57	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	7000
58	Միջին ձգանի հանում և տեղադրում	100
59	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	100
60	Վերևի լծակի հանում և տեղադրում	5000
61	Վերևի լծակի վռանների փոխարինում	5000
62	Գնդե հոդակապերի փոխարինում	8000
63	Ծայրակալների հանում և տեղադրում	100
64	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	0
65	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000
66	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0
67	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7000
68	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	5000
69	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	5000
70	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	5000
71	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	5000
72	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	5000
73	Անվաբացքի կարագավորում	8000
74	Ձողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1000
	5. Ղեկային մեխանիզմ	
75	Ղեկային կալունի հանում և տեղադրում	20000

76	Ղեկային կալունի վերանորոգում	50000
77	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	100
78	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	100
79	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	100
80	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	100
81	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	1000
	6. Արգելակային համակարգ	
82	Գլխ. գլանի հանում և տեղադրում	5000
83	Գլխ. գլանի վերանորոգում	5000
84	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	4000
85	Բանվ. գլանի հանում և տեղադրում	4000
86	Բանվ. գլանի վերանորոգում	4000
87	Արգելակային համակարգի օդահանում	1000
88	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3000
89	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	3000
90	Առջևի սուպպորտի վերանորոգում	3000
91	Հետևի սուպպորտի վերանորոգում	3000
92	Արգելակային փողրակի փոխարինում	1000
93	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	6000
94	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	6000
95	Հետևի կոճղակների փոխարինում	0
96	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
97	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
98	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	100
99	ABS-ի հանում և տեղադրում	100
100	ABS-ի վերանորոգում	100
101	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	1000
102	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	3000
	7. Էլեկտրասարքավորում	
103	Էլեկտրասարքավորման վերանորոգում	5000
104	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	100
105	Գեներատորի հանում և տեղադրում	8000
106	Գեներատորի վերանորոգում	8000
107	Մեկնարկիչի հանում և տեղադրում	8000
108	Մեկնարկիչի վերանորոգում	8000
109	Առջևի լապտերի հանում և տեղադրում	100
110	Հետևի լապտերի հանում և տեղադրում	100
111	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	100
112	Վազքաչափի հանում և տեղադրում	100
113	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	100
114	Սաքերի պանելի հանում և տեղադրում	10000
115	Արագաչափի հանում և տեղադրում	100
116	Ազդանշանի հանում և տեղադրում	1000
117	Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում	1000
118	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	100
119	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	10
120	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	5000
121	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	10
122	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	10
123	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000

124	էլեկտրական անջատիչների փոխարինում	500
125	Վառոցքի մոմերի փոխարինում	16000
126	Կոնդիցիոների լիցքավորում	15000
127	Կոնդիցիոների վերանորոգում	1000
	8. Այլ ծառայություններ	
128	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	1500
129	Անիվի հանում և տեղադրում	1000
130	Անվադողի վերանորոգում	500
131	Անիվի բայանսավորում	1000
132	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	5000
133	Խառատային աշխատանքներ	5000
134	Փականագործի աշխատանքներ	5000
135	Անիվի վալց	1500
	Հավելված Բ	
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Այլ պետությունների արտադրության մեքենաներ
	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4500
2	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5800
3	Յուղի զտիչ	6000
4	Յուղի պոմպ	1000
5	Յուղի պոմպի շարժաբեր	100
6	Յուղի ռադիատոր	100
7	Յուղի փողրակ	100
8	Յուղի ծորակ	100
9	Վառոցքի մոմ	8500
10	Ինժեկտորի ֆորսունկա	10000
11	Վառելանյութի մղիչ էլեկտրական	20000
12	Վառելանյութի զտիչ	25000
13	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	1000
14	Վառելանյութի փողրակ	1000
15	Օդի զտիչ	8000
16	Ջերմաստիճանային տվիչ	100
17	Յուղի տվիչ	100
18	Բաշխիչ լիսեռի տվիչ	5000
19	Օդի ծախսի տվիչ	10
20	Արագաչափի տվիչ	10
21	Հովհարի տվիչ	10
22	Ջրի տվիչ	10
23	Բենզոբաքի տվիչ	10
24	Մարման ընթացքի կարգավորիչ	10
25	Մարման ընթացքի տվիչ	10
26	Ղեկավարման համակարգիչ	10
27	Պարապ ընթացքի տվիչ	10
28	Դրոսելային փականի տվիչ	10
29	Թթվածնի տվիչ	10
30	Սրահի զտիչ	8000
	2. Սառեցման և արտածման համակարգ	

31	Հովհարի փոկ	1000
32	Հովհար	5000
33	Ռադիատոր	68000
34	Ընդարձակող բաք	5000
35	Ռադիատորի փողրակ	3000
36	Թերմոստատ	18000
37	Ջրի պոմպ	40000
38	Ջրի պոմպի առանցքակալ	5000
39	Ջրի պոմպի թևակ	1000
40	Սառեցման հեղուկ 1 լիտր	5500
41	Ջրի պոմպի սռնանիվ	0
42	Հոլովակ	1000
43	Փոկ	500
44	Փոկ կոնդիցիոների	6000
45	Ծորակ	1000
46	Խլարարի ներդիր	1000
47	Խլարարի կախոց	500
48	Կրոնշտեյն	500
49	Անուր (Խամուտ)	100
50	Խլարար	5000
51	Ռեզոնատոր	5000
52	Վառարանի ռադիատոր	10000
	3. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
53	ԱՓՏ-ի զտիչ	15000
54	ԱՓՏ յուղ, 1 լիտր	13000
55	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	7000
56	Հերմետիկ	5000
	4. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
57	Կարդանային լիսեռ	1000
58	Էլաստիկ մուֆտ	1000
59	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	15000
60	Կարդանային լիսեռի խաչուկ	8000
	5. Կախոց	
61	Տրավերս	100
62	Կրոնշտեյն	100
63	Ձախ կամ աջ հոդակապ	45000
64	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	15000
65	Անվակունդ	5000
66	Անվակունդի խցուկ	1000
67	Անվակունդի ներքին առանցքակալ	20000
68	Անվակունդի արտաքին առանցքակալ	5000
69	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	20000
70	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	5000
71	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	0
72	Հարվածամեղմիչի թասակ	15000
73	Ձսպանակ	0
74	Առջևի հարվածամեղմիչ	40000
75	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	5000
76	Հարվածամեղմիչի վռան	5000
77	Ներքևի լծակ	30000

78	Ներքևի լծակի վռան	5000
79	Վերևի լծակ	30000
80	Վերևի լծակի վռան	5000
81	Գնդե հոդակապ	15000
82	Առջևի կայունարար	100
83	Առջևի կայունարարի վռան	5000
84	Առջևի կայունարարի առջևի վռան	100
85	Հետևի զսպանակ	100
86	Հետևի ցնցամեղմիչ	40000
87	Հետևի մետաղածող (շտանգա)	15000
88	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան	5000
89	Հետևի անկյունագծային լծակ	100
90	Անկյունագծային լծակի վռան	100
91	Աջ կամ ձախ ձգան	10000
92	Ծայրակալ	100
93	Ձգան մեջտեղի	100
	6. Ղեկային մեխանիզմ	
94	Ղեկային կալուն	0
95	Ղեկային կալունի առանցքակալ	500
96	Ղեկային կալունի խաչուկ	15000
97	Հիդրոուժեղարար	10
98	Հիդրոուժեղարարի փոկ	0
99	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	10
100	Հիդրոուժեղարարի պոմպ	10
101	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10
102	Ղեկային ձող	0
103	Ղեկային ձողի ծայրակալ	0
104	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	6000
105	Ճոճանակ	10
106	Ճոճանակի վռան	10
	7. Արգելակային համակարգ	
107	Գլխավոր գլան	5000
108	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	5000
109	Վակուումային ուժեղարար	5000
110	Բանվորական գլան	5000
111	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	5000
112	Արգելակային փողրակ	2000
113	Սուպպորտի ուղղորդիչ	4000
114	Սուպպորտի մանժետ	4000
115	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	35000
116	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	30000
117	Առջևի արգելակային սկավառակ	35000
118	Հետևի արգելակային սկավառակ	35000
119	Ձեռքի արգելակի ճոպան	100
120	ABS-ի տվիչ	100
121	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	3000
122	Ձեռքի արգելակի ճոպան	3000
	8. Էլեկտրասարքավորում	
123	Գեներատոր	80000
124	Գեներատորի դիոդային կամրջակ	10000

125	Գեներատորի ռելե	15000
126	Գեներատորի առանցքակալ	5000
127	Ստարտեր	80000
128	Ստարտերի ռելե	15000
129	Ստարտերի ածուխ	15000
130	Բենդեքս	15000
131	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	10000
132	Վառոցքի մոմ	0
133	Լամպ	8000
134	էլեկտրական անջատիչ	1000
135	էլեկտրական տվիչ	1000
136	էլեկտրական չափիչ սարք	10
137	Բռնկման կողպեք	10
138	էլեկտրալարերի գլխավոր խուրց	10
139	էլեկտրալարերի երկրորդային խուրց	1
140	Վառոցքային լարերի խուրց	10
141	Վառոցքի մոմի ծայրակալ	2500
142	Վազքաչափ	10
143	Վազքաչափի ճոպան	10
144	Արագաչափ	10
145	Ազդանշան	5000
146	Ապակելվացիչ	5000
147	Ապակելվացիչի շարժիչ	5000
148	Դռների կենտրոնական փական	10
149	էլեկտրաամբարձիչ	5000
150	էլեկտրաամբարձիչի շարժիչ	10000
Ընդամենը ծառայություններ		474630
Ընդամենը ապրանքներ		1178851
Ընդամենը՝		1,653,481.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 900000900283
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,
Ռուբինյանց 31
ՀՎՀՀ՝ 00873228
ՀՀ՝ 1510012745550100
Բանկ՝ <<Արարատբանկ>> ԲԲԸ
Տնօրեն
Ա. Լալայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«25» ապրիլի 2019 թ. կնքված
«ՊԾԳՀ-ԾՀԲ-2019/1/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/5	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	...	...	...	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 900000900283
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,
Ռուբինյանց 31
ՀՎՀՀ՝ 00873228
ՀՀ՝ 1510012745550100
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Տնօրեն
Ա.Լալայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«25» ապրիլի 2019 թ. կնքված
«ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/1/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.